Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՍՏՂԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ <<ՄԱՆԿԱՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 <<ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Պետության կարևոր խնդիրներից մեկը բնակչության ժողովրդագրական բարենպաստ իրավիճակի ձևավորումն է, ինչը ենթադրում է այդ ուղղությամբ համալիր միջոցառումների մշակում ու իրականացում: Այդ միջոցառումներում, առաջին հերթին, պետք է բացահայտել մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և հիմնական ջանքերը գործադրել դրանց լուծման ուղղությամբ: Այդպիսի մոտեցման կարևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մանկամահացությունը բնակչության կենսամակարդակը, ինչպես նաև երկրի առողջապահական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է, որն էական ազդեցություն ունի բնակչության բնականոն զարգացման վրա:

Մանկամահացության վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնների համալիր ուսումնասիրությունը, առկա հիմնախնեդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված մոտեցումների մշակումը պետք է դառնա պետական քաղաքականության կարևոր ուղղություններից՝ հիմնված գիտական ուսումնասիրությունների ու հետազոտությունների վրա: Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են այդ հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով

պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում ներկայացված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ <<Մանկամահացության վիճակագրական ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմունքները>> գլխում*** ներկայացվել է տվյալ հիմնահարցի ուսումնասիրության պատմությունը, մանկամահացության ու դրա ածանցյալ ցուցանիշների վերլուծության մեթոդաբանությունը:

Աշխատանքի ***երկրորդ՝ <<Մանկամահացության ցուցանիշի ուսումնասիրութունը ժամանակի և տարածության մեջ ՀՀ տվյալներով›› գլխում*** իրականացվել է մանկամահացության ցուցանիշի վերլուծություն՝ ըստ սեռի և բնակավայրի:

Ատենախոսության ***երրորդ՝ ‹‹Մանկամահացության վրա ազդող գործոնների վիճակագրական ուսումնասիրությունը ՀՀ տվյալներով›› գլխում*** վերլուծվել է ՀՀ 2010-2019թթ. մանկամահացության ցուցանիշի դինամիկան և կառուցվածքն ըստ մահվան հիմնական պատճառների:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ ***հիմնավորվածություն և հավաստիություն:***

Աշխատանքի ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ ՀՀ-ում մանկամահացության գործակցի վերլուծության արդյունքում բացահայտվել են մանկական մահերի վրա ազդող գործոնները և ըստ ՀՀ մարզերի վերլուծվել է դրանց առաջացման պատճառները, գնահատվել են այդ գործոնների ազդեցության սահմանները, հիմնավորվել է մանկամահացության և բացահայտված գործոնների միջև եղած փոխկապվածությունները:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքներն ընձեռում են հնարավորություն կողմնորոշվել սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության ***գիտագործնական նշանակությունը*** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել մանկամահացության կրճատման և ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակը ներկայացնում է մանկամահացության վրա ազդող հիմնական գործոնները: Միևնույն ժամանակ, դրանց ազդեցության, ինչպես նաև փոխկապվածության գնահատման ուղղությամբ վերլուծությունները աչքի չեն ընկնում բավարար խորությամբ: Այս համատեքստում, ցանկալի կլիներ, եթե առավել հանգամանալից անդրադարձ կատարվեր տնտեսական գործոնների ազդեցությանն ու դրանց դրսևորմանը:

2. Մանկամահացության հիմնախնդիրները, մեր կարծիքով, խորը կապվածություն ունեն սոցիալ-ժողովրդագրական զարգացումների և դրանց արդյունքում առաջացող իրավիճակի հետ: Հետևաբար, տվյալ. հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրությունը, մեր կարծիքով, հեղինակը պետք է

իրականացներ այդ համատեքստում՝ գնահատելով դրանց փոխադարձ կապվածությունն ու կախվածությունը:

3. Հանրապետությունում մանկամահացության ցուցանիշի վերլուծության արդյունքում հեղինակն ըստ մարզերի ներկայացնում է դրա դինամիկան: Կարևորելով նման վերլուծությունը, միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսության գիտագործնական նշանակությունն ավելի կբարձրանար, եթե հեղինակը ներկայացներ մարզերի նաև սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները պայմանավորող գործոնները, որոնք, ի վերջո, անդրադառնում են նաև մանկամահացության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների լուծմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ա. Մովսիսյանի թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել ժողովրդագրական խնդիրների լուծման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Մովսիսյանի <<Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 <<Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**
12.05.2022թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար **Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

12.05.2022թ.